

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 ապրիլի 2009 թվականի N 404 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N1330-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի “Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզևավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին” N1330-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

“3) հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանություն արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակների համար բնուսի չափերը՝ համաձայն N3 հավելվածի:”.

2) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. 1-ին կետը “պարզևավճարների” բառից հետո լրացնել “, ինչպես նաև վիճակահանության արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակներ տիրապետող ֆիզիկական անձանց բնուսների հաշվարկման և ” բառերով.

բ. 2-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբա գրությամբ.

“8) բնուս՝ վիճակահանության արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակների համար սույն կարգին համապատասխան հաշվարկվող գումար:”.

գ. ուժը կորցրած ճանաչել 6-րդ կետը,

դ. 10-րդ կետը “պարզևավճարների” բառից հետո լրացնել “(բազային պարզևավճարների և բնուսների)” բառերով,

ե. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբա գրությամբ.

“12. Յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում տրամադրված՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ հատուկ համարներ պարունակող և սույն կարգին համապատասխան

իրականացված վիճակահանությունների արդյունքում չշահած կտրոնները Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշմամբ սահմանված կարգով ու ժամկետներում հարկային մարմին ներկայացնելու դեպքում կտրոնների խմբաքանակների համար հաշվարկվում և վճարում է բոնուս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշման N3 հավելվածով սահմանված չափերով:”,

գ. 13-րդ կետում “տրամադրման” բառը փոխարինել “և վճարման” բառերով,

է. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1 -ին կետով.

“13.1. Պարգևավճարների հիմնադրամը կարող է համալրվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից “Հրապարակային սակարկությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ որոշակի խմբաքանակների կտրոնների դարձերեսներին ֆիրմային անվանումներ, ապրանքային և սպասարկման նշաններ տեղադրելու համար հրապարակային սակարկությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող գումարների հաշվին:”,

ը. 14-րդ կետի առաջին և երրորդ նախադասություններից հանել “և բոնուս” բառերը,

թ. 15-րդ կետից հանել “և բոնուս” բառերը, իսկ “տրամադրվում են” բառերը փոխարինել “տրամադրվում է” բառերով,

ժ. 18-րդ կետից հանել “և բոնուսի” բառերը,

ժա. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 18.1 -ին կետով.

“18.1. Սույն կարգի 12-րդ կետում նշված վիճակահանությունների արդյունքում չշահած կտրոններ տիրապետող ֆիզիկական անձինք բոնուս ստանալու նպատակով կարող են մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային (տարածքային) տեսչություն ներկայանալ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով՝ ներկայացնելով դիմում, որին կցվում են հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնների բնօրինակները (խմբավորելով ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշման N3 հավելվածում նշված խմբաքանակների և գործարքների ընդհանուր արժեքի նվազագույն չափերի, ստորագրելով յուրաքանչյուր կտրոնի դարձերեսին), անձնագրի կամ

անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Ներկայացված խմբաքանակներով կտրոնները հարկային մարմնի կողմից ստուգվելուց հետո դրանք ներկայացնող ֆիզիկական անձին տրվում է հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևով միջնորդա գիր՝ հաշվարկված բոնուսը ստանալու նպատակով բանկ ներկայացնելու համար: Ներկայացված խմբաքանակները սույն կարգին չհամապատասխանելու դեպքում դրանք վերադարձվում են ներկայացնողին: Ֆիզիկական անձինք բոնուս ստանալու համար մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը բանկ են ներկայանում անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով՝ ներկայացնելով հարկային մարմնի կողմից տրված միջնորդա գիրը, անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:”,

Ժբ. 19-րդ կետի 3-րդ ենթակետը “նախորդող ամսվան” բառերից հետո լրացնել “(բոնուս ստանալու նպատակով նախորդ եռամսյակին)” բառերով.

3) որոշումը լրացնել N3 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) մեկամսյա ժամկետում, “Հրապարակային սակարկությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, ստեղծել աճուրդի հանձնաժողով.

2) եռամսյա ժամկետում, “Հրապարակային սակարկությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հաստատել աճուրդի կանոնակարգը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2009 թվականի մարտ ամսվա ընթացքում տրամադրված՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահող կտրոնների համար բոնուսը հաշվարկվում և վճարվում է մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող կարգով: 2009 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ տրամադրված հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների համար բոնուսը հաշվարկվում և վճարվում է սույն որոշմամբ սահմանված կարգով:

Հավելված
 ՀՀ կառավարության 2009
 թվականի ապրիլի 9-ի N 404 -
 Ն որոշման “Հավելված” N3
 ՀՀ կառավարության 2008
 թվականի հոկտեմբերի 30-ի N
 1330-Ն որոշման

**ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՉՇԱՀԱԾ ԿՏՐՈՆՆԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿՆԵՐԻ
 ՀԱՄԱՐ ԲՈՆՈՒՄԻ ՉԱՓԵՐԸ**

Ներկայացնելու ենթակա կտրոնների խմբաքանակը	Կտրոնների խմբաքանակին համապատասխան գործարքների ընդհանուր արժեքի նվազագույն չափերը (դրամ)	Բոնուսի գումարը՝ կտրոնների յուրաքանչյուր խմբաքանակի համար (դրամ)
50 կտրոն	100,000	2,500
	200,000	6,000
	300,000	10,000
100 կտրոն	200,000	5,000
	400,000	12,000
	600,000	20,000
200 կտրոն	400,000	10,000
	800,000	24,000
	1,200,000	40,000
300 կտրոն	600,000	15,000
	1,200,000	36,000
	1,800,000	60,000
400 կտրոն	800,000	20,000
	1,600,000	48,000
	2,400,000	80,000
500 կտրոն	1,000,000	25,000
	2,000,000	60,000
	3,000,000	100,000
600 կտրոն	1,200,000	30,000
	2,400,000	72,000
	3,600,000	120,000
700 կտրոն	1,400,000	35,000
	2,800,000	84,000
	4,200,000	140,000
800 կտրոն	1,600,000	40,000
	3,200,000	96,000
	4,800,000	160,000
900 կտրոն	1,800,000	45,000
	3,600,000	108,000

	5,400,000	180,000
1000 կտրոն	2,000,000	50,000
	4,000,000	120,000
	6,000,000	200,000